ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՀՏԴ՝ 371.322.3
DOI: 10.56246/18294480-2025.18-22

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ՆԱԻՐԱ
Գավառի պետական համալսարանի դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
էլփոստ՝ isnaira123456@gmail.com
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆԻԿ
ԳՊՀ հումանիտար ֆակուլտետի
«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»
բաժնի մագիստրատուրա յի 2-րդ կուրսի ուսանողուհի
էլփոստ՝ anikavetisyan417@gmail.com

Տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացման ներկայիս դարաշրջանում խոսքի զարգացման մեթոդիկան նոր մակարդակ է ձեռք բերել: Վերջին տասնամյակում ի հայտ եկած առանձին տեսությունները, գիտական ուղղությունները, որոնք սերտորեն առնչվում են մայրենիի դասավանդման մեթոդիկային, խոսքի զարգացման ժամանակակից մեթոդիկայի վրա էական ազդեցություն են գործել: Սույն հոդվածում փորձ է կատարվել ուսումնասիրել և վերլուծել տարրական դասարաններում ստեղծագործական շարադրությունների ուսուցման ընթացքում ի հայտ եկած բացթողումները և դրանց շտկման համար առաջարկել նոր մոտեցումներ: Հետազոտության առարկան տարրական դասարաններում ստեղծագործական շարադրությունների ուսուցման մեթոդներն են: Հետազոտության կատարման համար ընտրվել են թեմայի վերաբերյալ առկա տեսական նյութի ուսումնասիրման, դիտման, հարց ու պատասխանի մեթոդները: Ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ ստեղծագործական բնույթի շարադրություններ գրելու գործընթացում առկա են մի շարք բացթողումներ, որոնք ազդում են սովորողների կապակցված խոսքի, ստեղծագործական երևակայության, շարադասական, շարահյուսական ընդունակությունների զարգացման վրա: Ի հայտ եկած խնդիրների շտկման համար առաջարկությունների տեսքով ներկայացրել ենք եղանակներ, որոնք կնպաստեն ստեղծագործական շարադրությունների ուսուցման գործընթացի բարելավմանը: Դրանցից են «Մտագրոհ», «Նախադասություն՝ պատահական երեք բառերով», խոսքի զարգացումն ըստ երաժշտության, Ջանի Ռոդարիի մեթոդով բառերի հետ տարվող աշխատանքներ, բազմաբնույթ մտածողության տեխնոլոգիայի տարրերի կիրառմամբ մեթոդները և հնարները:

Բանալի բառեր՝ *ստեղծագործական շարադրություն, նկարագրական, դատողական շարադրություն, նկարի վերաբերյալ շարադրություն, կինոնկարի շուրջ շարադրություն, պլանի կազմում:*

Ներածություն: Կրտսեր դպրոցում կարևոր տեղ է հատկացվում ստեղծագործական շարադրությունների ուսուցմանը: Այս տարիքից պետք է երեխաների մոտ ձևավորել կապակցված խոսք կառուցելու հմտություններ, որը միջին և ավագ դպրոցում մտքերը ճիշտ արտահայտելու լայն հնարավորություններ կտա և կդառնա առաջընթացի գրավականը: Այն զարգացնում է երեխայի երևակայությունը, մտածողությունը, խոսքը ճիշտ և գրագետ շարադրելու կարողությունները, լուծում կրթադաստիարակչական խնդիրներ, բարձրացնում է երեխայի ակտիվությունը ուսման գործընթացում, ձևավորում վերլուծելու և համադրելու, էականը երկրորդականից տարբերելու կարողություններ: Երեխան սովորում է իր տեսածը, լսածը, զգացածը վերարտադրել և ձևաբանորեն ու շարահյուսորեն ճիշտ հանձնել թղթին:

Հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել և վերլուծել տարրական դասարաններում ստեղծագործական շարադրությունների ուսուցման ընթացքում աշակերտների թույլ տված սխալները և դրանց շտկման ուղղությամբ տարվող աշխատանքները: Ինչպես նաև առաջարկությունների տեսքով ներկայացնել ստեղծագործական շարադրությունների ուսուցման նախապատրաստական փուլում իրականացվող մեթոդներ: Հետազոտության համար տեսական և գործնական հիմքեր են հանդիսացել թեմայի վերաբերյալ առկա գրականության ուսումնասիրությունը, ուսուցիչների շրջանում իրականացված հարցախույզը, ինչպես նաև տարրական դասարանների աշակերտների գրավոր աշխատանքների ուսումնասիրությունները: Հետազոտության վարկածը այն է, որ եթե հավուր պատշաճի իրականացնենք ստեղծագործական շարադրությունների ուսուցումը, ապա այն կնպաստի սովորողների բառապաշարի հարստացմանը, գրավոր և բանավոր խոսքի զարգացմանը: Շարադրությունը տարրական դասարաններում տրվող գրավոր աշխատանքների հիմնական տեսակներից մեկն է, որը կարևոր նշանակություն ունի ինչպես ուղղագրական, այնպես էլ գրավոր խոսքի ուսուցման տեսակետից: Շարադրությունը կրթում է աշակերտի միտքը՝ նպաստելով նրա իմացական կարողությունների, ճանաչողության, տրամաբանական և ստեղծագործական մտածողության զարգացմանը: Շարադրությունները տարրական դպրոցում ուսուցողական վարժություններ են, որոնք բացահայտում են և զարգացնում աշակերտների ունեցած լեզվական կարողությունները, քերականական տարրական գիտելիքները գործնականում կիրառելու ունակությունները [1] : Շարադրության մեջ աշակերտն արտահայտում է իր վերաբերմունքը նկարագրվող երևույթների, առարկաների ու անձանց նկատմամբ, գնահատում, եզրակացություններ ու դատողություններ է անում նրանց արարքների շուրջ: Այս ամենը սրում է նրա միտքը, դատողությունը դարձնում

[1] Տե՛ս Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015, էջ 300:

ավելի քննադատական: Շարադրություն գրելիս մարդն իրեն որոշակի խնդիրներ է առաջադրում, պլան կազմում և իր մտավոր ու հոգեկան կարողությունները նպատակաուղղում դրանց իրագործմանը: Շարադրությունները նպաստում են երեխայի մեջ բարոյական արժեքների և կերպարի ձևավորմանը[1]: Այս դեպքում շարադրություն գրողի մտավոր կարողություններն ու հոգեկան ապրումները ենթարկվում են նրա կամային ցանկություններին, որը աշակերտի մեջ կամքի ուժ է մշակում[2]:

Տարրական դասարաններում հանձնարարվող շարադրություններն ըստ բնույթի հիմնականում լինում են երեք տեսակ՝ *վերարտադրողական, ստեղծագործական և գործնական: Ս*տեղծագործական բնույթի շարադրություններում աշակերտը ինքն է որևէ բան ստեղծում՝ ավելացնում, փոփոխում կամ իր որոշակի վերաբերմունքն է ցույց տալիս նկարագրվող դեպքերի ու դեմքերի նկատմամբ[3]: Ստեղծագործական կամ ազատ շարադրություն գրելը պահանջում է որոշ նախապատրաստություն: Շարադրություն գրելուց առաջ նախ մտքում, ապա համառոտ նշումներով անհրաժեշտ է հերթականորեն առանձնացնել թեմայի հիմնական ու մնացյալ հարցերը: Այնուհետև անհրաժեշտ է մտածել շարադրանքի կառուցվածքի մասին, այն է՝ ինչպես սկսել և ինչպես ավարտել: Նախընտրելի է կազմել ոչ երկարաշունչ նախադասություններ, դիպուկ, բնութագրական բառեր գործածել: Շարադրության մեջ երևույթների կամ առարկաների բնութագրումներն ավելի տպավորիչ դարձնելու համար կարելի է օգտվել ինչպես հոմանիշների, այնպես էլ դարձվածների բառարաններից: Աշոտ Տեր-Գրիգորյանը տարրական դասարաններում տրվող ստեղծագործական շարադրությունները բաժանում է հինգ տեսակի՝ ա) նկարի շուրջ գրվող շարադրություն, բ) նկարագրական շարադրություն, գ) կարդացած նյութի վերաբերյալ գրվող շարադրություն, դ) դիտած կինոնկարների շուրջ գրվող շարադրություն, ե) ինքնուրույն կամ հորինողական բնույթի շարադրություն: Ի տարբերություն Ա. Տեր–Գրիգորյանի՝ Ա. Վ. Գրիգորյանը նշում է ստեղծագործական շարադրությունների երեք տեսակ. պատմողական, նկարագրական, դատողական: Դրանք անխառն և առանձին ձևով հանդես գալ չեն կարող, քանի որ դժվար է պատկերացնել պատմողական բնույթի շարադրություն՝ առանց նկարագրական տարրերի, նկարագրականն էլ՝ առանց դատողական տարրերի: Բայց և այնպես սրանք բոլորն էլ ունեն իրենց լեզվական ու կառուցվածքային յուրահատկությունները: Օրինակ՝ պատմողական բնույթի շարադրության մեջ պատմվում է որևէ երևույթի մասին, որը պետք է ունենա հաղորդման սկիզբ, զարգացում և ավարտ: Նկարագրական շարադրության կառուցվածքը այլ է: Այն սկսվում է նկարագրվող երևույթից կամ առարկայից ստացած տպավորություններով, հետո ցույց են տրվում նրանց առանձին հատկանիշները, որոնք ապացուցում են տվյալ բովանդակության ճշմարտացիությունը, իսկ վերջում տրվում է գնահատականը: Որպես օրենք՝

---

[1] Տեր - Գրիգորյան Ա. Ե.,Հայոց լեզվի մեթոդիկա, «Լույս» հրատ., Եր., 1980, էջ 456:

[2] Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, «Լույս» հրատ., Եր., 1980, էջ 458:

[3] Նույն տեղում, էջ 458:

դատողականը պետք է բաղկացած լինի ընդհանուր վիճակը բացահայտող մասից, ապացույցներ պարունակող մասից և անհրաժեշտ եզրակացություններից, որոնք երբեմն կարող են չլինել[1]: Շարադրություն գրելուց առաջ աշակերտը պետք է որոշակի պատկերացում կազմի գրվելիք նյութի մասին: Աշակերտի մտքերն ավելի համակարգված և կոնկրետ դարձնելու համար թեմայի ընտրությունից հետո անհրաժեշտ է կազմել շարադրության **պլան**: Տարրական դասարաններում այն կարող է լինել երեք տեսակ՝ *պատրաստի ձևով առաջադրված, միասնաբար մշակված և անհատական կամ ինքնուրույն ձևով կազմված*: Կախված ուսուցչի նպատակադրումից և թեմայի բարդությունից՝ կարող ենք պլանը առաջադրել պատրաստի ձևով, բայց դա կսահմանափակի աշակերտների ինքնուրույնությունը: Ստեղծագործական բնույթի շարադրության պլանը ևս, ինչպես փոխադրության պլանը, կարող է արտահայտված լինել հարցերով, պատմողական նախադասություններով ու ենթավերնագրերով:

Շարադրություն դիտած նկարից: Տարրական դասարաններում պատկերը շատ կարևոր դեր է խաղում ուսումնական գործընթացը կազմակերպելիս: Դրա շուրջ տարվող աշխատանքները ձևավորում են ոչ միայն լեզվական կարողություններ, այլև նպաստում գեղարվեստական ճաշակի ու զգացմունքների ձևավորմանը, ճանաչողության, դիտողականության, մտածողության և երևակայության զարգացմանը: Նկարը նույնիսկ ամենալռակյաց, ոչ ակտիվ երեխային հնարավորություն է տալիս անկաշկանդ խոսել: Տարրական դասարաններում դիտած նկարի շուրջ շարադրություն գրելը սկսվում է միևնույն սյուժեի զարգացումը պատկերող նկարների շարքից, որը շատ նման է նկարներով արտահայտված պլանին: Այսպիսի շարադրությունները հիմնականում հանձնարարվում են առաջին դասարանում: Նկարի հիմնական բովանդակությունը ճիշտ ընկալելուց հետո սկսվում է նկարի «ընթերցումը» կամ իմաստավորումը: Այս փուլում աշխատանքը հիմնականում պետք է տանել հետևյալ հարցերը պարզելու ուղղությամբ. ա) որտե՞ղ է կատարվում գործողությունը, բ) ե՞րբ է կատարվել այդ գործողությունը, գ) ո՞վ կամ ի՞նչ է պատկերված նկարում և այլն: Հաջորդ քայլը շարադրությանը համապատասխան վերնագիր ընտրելն է: Նկարների դիտումից և դրանց բովանդակությունն առանձին–առանձին պատմելուց հետո աշակերտներին առաջարկվում է կազմել շարադրություն՝ հենվելով բոլոր նկարների վրա[2]:

Նկարագրական շարադրություն: Շարադրության ամենապարզ ձևերից մեկն էլ տեսածի, լսածի, անձնական փորձի, ապրումների ու էքսկուրսիաների նկարագրությունն է: Այսպիսի շարադրությունների ամենապարզ ձևը առարկայի նկարագրությունն է՝ ըստ ձևի, գույնի, չափի և այլ հատկանիշների: Այն հաճախ կիրառվում է առաջին և երկրորդ դասարաններում: Առանձնահատուկ տեղ պետք է տալ առանձին առարկաների հատկանիշների և աշակերտների

---

[1] Գրիգորյան Ա. Վ., Ստեղծագործական շարադրությունների ուսուցման հարցեր, «Լույս» հրատ., Երևան, 1984, էջ 5:

[2] Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, «Լույս» հրատ., Եր., 1980, էջ 469:

աշխատանքային գործունեության նկարագրությանը, որը դաստիարակչական և ճանաչողական տեսակետից կարևոր դեր է խաղում աշակերտի անձի ձևավորման գործում[1]:

Կարդացած նյութերի շուրջ գրվող շարադրություն: Այս տեսակի արադրություններ դպրոցում ավելի հաճախ են տրվում: Սակայն շարադրության նյութ կարելի է դարձնել ոչ թե անցած բնագիրը, այլ համանման այլ թեմաներ, այսպիսիք կոչվում են նմանությամբ գրված շարադրություններ: Կարդացած բնագրերի վերաբերյալ շարադրություններ գրելու վարժություններում մեծ տեղ պետք է տալ առարկաների նկարագրությանը: Ինչպես նկատել է Ս. Մանդինյանը, առարկաների հատկանիշների նկարագրությունը շարադրության համար շատ հարմար նյութ է, դրանց շուրջ ստեղծված սյուժեն որոշակի է, կառուցվածքը՝ պարզ, լեզուն ու բովանդակությունը՝ դյուրըմբռնելի:

Կինոնկարի շուրջ գրվող շարադրություն: Այս բնույթի շարադրությունները հիմնված են տեսողական մտապատկերների վրա, ուստի մեծ չափով նպաստում են դիտողականության զարգացմանը: Այսպիսի շարադրություն գրելիս ևս պետք է կատարել բառային ու ուղղագրական աշխատանք, որպեսզի հնարավորինս խուսափենք սխալներից:

Ինքնուրույն կամ հորինողական շարադրություն: Այստեղ ստեղծագործական տարրն ավելի արտահատված է: Տարրական դասարաններում տրվող հորինողական շարադրություններից մեկն էլ համառոտ սյուժեի ընդարձակումն է: Այս դեպքում ուսուցիչը գրատախտակին գրում է որևէ սյուժեի համառոտագրություն, կարդալ է տալիս աշակերտներին և թույլ տալիս, որ նրանք մտածեն, թե ինչն է պակասում, ինչ լրացումներ կարելի է անել՝ այն լրիվ և ամբողջական դարձնելու համար: Հորինողական շարադրություններից ամենաբարդը և լիովին ինքնուրույնը ազատ շարադրությունն է, երբ ուսուցիչը միայն շարադրություն գրելու հանձնարարություն է տալիս, իսկ մնացած ամբողջ աշխատանքը կատարում են աշակերտները՝ ստեղծելով նրա պլանն ու ամբողջ բովանդակությունը: Շարադրության այս տեսակը կարելի է առաջադրել երրորդ դասարանում[2]:

Ստեղծագործական շարադրությունների ուսուցումը պետք է սկսել պատմողական բնույթի գրավորներով, որովհետև աշակերտներն իրենց փորձով ձեռք բերած տպավորությունների մասին միշտ էլ ասելու, պատմելու անհագուրդ ցանկություն են ունենում: Քանի որ պատմողական բնույթի շարադրություն գրելն ավելի հեշտ է, քան նկարագրական, իսկ նկարագրականն էլ իր հերթին ավելի հեշտ է, քան դատողական, ուստի պետք է սահմանել ստեղծագործական շարադրությունների մշակման հետևյալ հերթականությունը՝ պատմողական, նկարագրական, դատողական: Ուսուցիչը պատմողական բնույթի շարադրությունը ուսուցանելիս պետք է աշակերտներին նախապատրաստի նկարագրական և դատողական բնույթի շարադրություն գրելուն, որովհետև պատմողականի մեջ

---

[1] նույն տեղում, էջ 469:

[2] Տեր-Գրիգորյան Ա. Ե.Հայոց լեզվի մեթոդիկա, «Լույս» հրատ., Եր., 1980, էջ 477:

միշտ էլ կան նկարագրական կամ դատողական տարրեր: Որպես գրավորի նախապատրաստական փուլ շատ կարևոր է պատմողական բնույթի բանավոր շարադրությունների ուսուցումը, որը դպրոցական պրակտիկայում քիչ կիրառություն ունի: Այն կարող է նպաստել սովորողի կապակցված խոսքի զարգացմանը՝ դառնալով գրավոր խոսքի զարգացման էական նախադրյալ և գործոն[1]: Նկարագրական շարադրության միջոցով աշակերտները կարողանում են տարբերել զանազան երևույթներ, առարկաներ, պատկերներ, բնական երևույթներ և այլն: Այս կարգի գրավորները զարգացնում են երեխայի դիտողականությունը, նրանց կողմից առարկային բնորոշ, առանձնահատուկ կողմերի տարբերակումը, որով բարենպաստ պայմաններ են ստեղծում նրանց խոսքի զարգացման համար: Դատողական շարադրությունները մյուս տեսակներից տարբերվում են լեզվական և կառուցվածքային առանձնահատկություններով: Ըստ կառուցվածքի՝ դատողական շարադրությունները կարող են լինել ինդուկտիվ և դեդուկտիվ: Ինդուկտիվի դեպքում դատողական եզրակացություններն սկսվում են մասնավորից, կոնկրետից և գնում դեպի ընդհանուրը: Իսկ դեդուկտիվում դատողական եզրահանգումներն սկսվում են ընդհանուրից և գնում դեպի մասնավորը: Աշակերտական դատողական շարադրությունները գրեթե միշտ լինում են ինդուկտիվ, որտեղ դրսևորվում է աշակերտների ընդհանուր միտքը, բերվում են փաստեր, հետո արվում է ընդհանուր եզրակացություն, ընդհանրացում[2]: Դատողական շարադրություններն օգնում են ուսուցչին լավ ճանաչել իր սաներին, հաղորդակից լինել նրանց ամենանվիրական հույզերին ու խոհերին, մտերմական զրույցի նստել նրանց հետ, պարզել նրանց քաղաքացիական կենսադիրքորոշումն ու ձևավորել նրանց բարոյա-քաղաքական նկարագիրը:

Գրավոր խոսքի կառուցվածքային սխալները շարադրելու տեխնիկային և ստեղծագործության կառուցվածքային առանձնահատկություններին չտիրապետելու հետևանք են: Այդ պատճառով էլ ամբողջ ուսուցման ընթացքում ուսուցիչը պարտավոր է աշակերտներին սովորեցնել շարադրություն կառուցելու տեխնիկան, նրանց հուշելով այն միտքը, որ գրավոր խոսքը պետք է ունենա ձևի և բովանդակության միասնություն, ներդաշնակություն, ինքնատիպ կառուցվածք: Լեզվաոճական և ուղղագրական սխալների վերացման միակ ճանապարհը ուսուցողական գրավորների ճիշտ նախապատրաստումն ու արդյունավետ կազմակերպումն է[3]:

Շարադրություններ հանձնարարելիս պետք է լուրջ ուշադրություն դարձնել սովորողների տարիքային առանձնահատկություններին, յուրաքանչյուր դասարանի համար ընտրել այնպիսի թեմաներ, որ նախ դյուրին, քիչ ջանքեր պահանջող աշխատանքներին հաջորդեն վերացականն ու բարդը: Մեծ է նաև

---

[1] Գրիգորյան Ա. Վ., Ստեղծագործական շարադրությունների ուսուցման հարցեր, «Լույս» հրատ., Երևան 1984, էջ 7:

[2] Նույն տեղում, էջ 10:

[3] Նույն տեղում, էջ 15:

շարադրության թեմայի նշանակությունը: Պետք է տրվեն ստեղծագործական բնույթի այնպիսի թեմաներ, որ աշակերտները կարողանան հիմնավորված եզրահանգումներ անել, պատկերավոր ու գեղեցիկ նկարագրել: Աշակերտներին պետք է ներշնչել խուսափել հիմնական թեմայից կատարվող անհարկի շեղումներից, որոնք խախտում են շարադրանքի ներքին տրամաբանությունը, երևույթների փոխադարձ կապը, ասելիքի ամբողջականությունը: Շարադրության ուսուցումը պետք է դարձնել ստեղծագործական ակտիվության զարգացման միջոց և դրանց կիրառմամբ աշակերտի մեջ մշակել դատողություն, ստեղծագործական միտք, գիտելիքների մեջ հմտանալու ցանկություն և մյուս առարկաներից ստացած գիտելիքները հաղորդելու կարողություն[1]:

Մայրենիի առարկայական չափորոշիչն ու ծրագիրը կարևորում են աշակերտների գրավոր խոսքի զարգացումը, մասնավորապես հաղորդակցական կարողությունների ձևավորման խնդիրների տեղի և դերի որոշման հարցում: «Մայրենի» առարկայի նպատակն առաջին հերթին աշակերտների խոսքի և մտածողության զարգացումն է, լեզվի հաղորդակցական գործառույթի իրականացումը: Երեխայի մտավոր և ստեղծագործական կարողությունների զարգացման հարցում, դաստիարակչական խնդիրների լուծման գործում անգնահատելի նշանակություն և դեր ունեն ստեղծագործական շարադրությունները:

Դասվարների շրջանում կատարված հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ նախկինում շարադրություններ հանձնարարում էին գրել տանը, որի արդյունքում աշակերտներն ունենում էին շարադրված տեքստ, որը կազմված էր մայրիկի արտահայտած մտքերից: Այդ շարադրությունները նախքան տետրերի մեջ գրելը դասվարը ստուգում, ապա նոր հանձնարարում էր գրել տետրերում, ինչը չափազանց ժամանակատար էր: Արդյունքում աշակերտների համար անհետաքրքիր էր դառնում շարադրություն գրելը, ավելին այն երեխաների մոտ չէր զարգացնում խոսքը, գրելու և ստեղծագործելու կարողությունները: Ուսուցիչների շրջանում կատարված հարցախույզից պարզ դարձավ նաև որ այս ամենից խուսափելու համար դասի ընթացքում կիրառում են մեթոդներ, որոնց միջոցով երեխան մեծ հետաքրքրությամբ և պատրաստակամությամբ է կատարում հանձնարարությունը: Ուսուցիչները նախապատրաստական փուլում հիմնականում կիրառում են «մտագրոհ» մեթոդը, տրված բառերով նախադասություն կազմելու վերաբերյալ աշխատանք, կամ վերնագրին համապատասխան երևույթների, առարկաների շուրջ բառակապակցությունների հյուսում և նմանատիպ այլ աշխատանքներ: Սակայն ոչ ոք չնշեց բառերի ուղղագրության, նախադասությունների կետադրության վերաբերյալ տարվող աշխատանքների մասին: Ուսուցիչների մի մասը նախապատրաստական աշխատանքը կատարում է պատմել տալով այն, ինչ պետք է աշակերտը գրի տվյալ թեմայի շուրջ: Սակայն բոլոր աշակերտները չեն հասցնում պատմել, ինչը

[1] Գրիգորյան Ա. Վ. Ստեղծագործական շարադրությունների ուսուցման հարցեր, «Լույս» հրատ., Երևան 1984, էջ 17:

բերում է նրանցից շատերի մոտ մտքի շարադրման սխալների: Բացի այդ, բոլոր աշակերտների շարադրություններում միևնույն միտքը կրկնվում է, որի արդյունքում սովորողների ստեղծագործական մտածողությունը և երևակայությունը բավարար չափով չի զարգանում: Դասվարների շրջանում կատարված հարցումների և գրավոր աշխատանքների տետրերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ստեղծագործական բնույթի շարադրություններ գրվում են երկրորդ դասարանից սկսած, իսկ առաջին դասարանում ստեղծագործական շարադրությունները հիմնականում բանավոր կերպով են անցկացվում, քանի որ սովորողները բավական չափով չեն տիրապետում գրելու կարողություններին:

Երկրորդ դասարանում տրվող գրավոր աշխատանքների հիմնական մասը թելադրություններն են, դրան հաջորդում են շարադրությունները, ապա՝ փոխադրությունները: Երրորդ դասարանում նույնպես առաջնայինը թելադրություններն էին, որոնց հաջորդում էին ստեղծագործական բնույթի շարադությունները, ապա՝ փոխադրությունները: Չորրորդ դասարանում շարադրությունների և փոխադրությունների քանակները հավասարվում են: Երկրորդից չորրորդ դասարանների ուսուցողական և թեմատիկ գրավոր աշխատանքների տետրերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ստեղծագործական շարադրություններում հիմնական սխալները կապված են նախադասությունը մեծատառով սկսելու, նախադասության վերջում վերջակետ դնելու, ուղղագրական դժվարություն ներկայացնող բառերի սխալ գրության, օժանդակ բայերի գրության հետ: Այս խնդիրը ի հայտ եկավ ինչպես դասերի դիտարկումների, այնպես էլ՝ ուսուցիչների հետ զրույցի արդյունքում: Նկատեցինք նաև, որ մտքի շարադրման սխալների շուրջ աշխատանք գրեթե չի տարվում: Ուսուցիչը հաճախ ընդգծում է տվյալ նախադասությունը, սակայն բացատրական և շտկողական աշխատանք չի տանում աշակերտի հետ, որի արդյունքում սովորողի համար անհայտ է մնում, թե ինքը մտքի ինչ սխալ է թույլ տվել: Որպեսզի երեխան հնարավորինս քիչ սխալներ թույլ տա, կարողանա ճիշտ և իմաստալից շարադրել իր մտքերը, կառուցել կապակցիկ խոսք, անհրաժեշտ է մայրենիի դասերին կիրառել ժամանակակից տարբեր մեթոդներ, հնարներ, միջոցներ: Դրանք խթան կհանդիսանան սովորողների տրամաբանական և ստեղծագործական մտածողության, երևակայության, կապակցված խոսքի կառուցման հմտությունների ձևավորման ու զարգացման համար:

Ամփոփում: Այսպիսով, ուսումնասիրելով ստեղծագործական շարադրությունների ուսուցման վերբերյալ մեթոդական գրականությունը և դպրոցում կատարելով հետազոտական աշխատանք, կարող ենք եզրակացնել, որ ստեղծագործական շարադրությունները տարրական դպրոցում ունեն մեծ նշանակություն ո՛չ միայն աշակերտի գրավոր խոսքը ճիշտ կառուցելու, քերականական ու շարահյուսական բավարար գիտելիքներ ձեռք բերելու առումով, այլ նաև գրագետ հաղորդակցվելու և ստեղծագործականության բարձր մակարդակ ապահովելու գործում: Այս գործընթացը առավել արդյունավետ իրականացնելու համար կարևոր է մեթոդների ճիշտ և նպատակային ընտրությունը, ուսուցչի հետևողական մոտեցումը սովորողների ստեղծագործական մտածողության և

երևակայության, կապակցված խոսքի զարգացման հարցին: Ուսումնասիրությունների ընթացքում շարադրությունների ուսուցման գործընթացում ի հայտ եկած դժվարությունները ցույց են տալիս, որ ստեղծագործական շարադրությունների ուսուցման պատշաճ իրականացումը կնպաստի շարահյուսական, ուղղագրական և մտքի շարադրման հետ կապված սխալների շտկմանը:

Առաջարկություններ: Ուսումնասիրության արդյունքում բացահայտված խնդիրների և դժվարությունների արդյունավետ հաղթահարման համար առաջարկում ենք ստեղծագործական շարադրությունների ուսուցման գործընթացի նախապատրաստական փուլում կիրառել հետևյալ մեթոդներն ու հնարները.

1. Մտագրոհ, որը կլինի ստեղծագործական շարադրության տվյալ թեմայի հիմնական միտքն արտահայտող բառի շուրջ: Այն հնարավորություն կտա սովորողների ուշադրությունը կենտրոնացնել տվյալ թեմայի վրա, կհարստացնի բառապաշարը, ինչը հնարավորություն կտա առավել հետաքրքիր և հարուստ բնագիր կազմել:

2. Բազմաբնույթ մտածողության տեխնոլոգիայի տարրերի կիրառում: Այն հնարավորություն կտա զարգացնել սովորողների տրամաբանական, ստեղծագործական, երաժշտական, լեզվական մտածողությունը: Այսինքն՝ կնպաստի անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը:

3. Նախադասություններ պատահական երեք բառերով: Ընտրվում է պատահական երեք բառ, որոնք իմաստային ոչ մի կապ չունեն միմյանց հետ, օրինակ՝ լիճ, մատիտ և արջ: Պետք է կազմել որքան հնարավոր է շատ նախադասություններ այնպես, որ այդ բառերը միշտ լինեն նախադասության մեջ. կարելի է այլ բառեր ևս ավելացնել: Պիտի խրախուսել ստեղծագործական բնույթի պատասխանները: Սա օգնում է առարկաների, երևույթների, հասկացությունների միջև կապեր հաստատելուն, ընդհանրացումներ անելուն, ամբողջական պատկերներ կառուցելուն: Աշխատանքի ավարտից հետո առաջարկում ենք կազմված նախադասությունները օգտագործելով գրել ստեղծագործական շարադրություն:

4. Ըստ Ջանի Ռոդարիի՝ բառերի հետ տարվող աշխատանքները. Ջանի Ռոդարին առաջարկում է խաղալ բառերի հետ, բացահայտել դրանց բոլոր հնարավորությունները: Օրինակ՝ նա տալիս է բառ և առաջարկում դրա կազմի մեջ մտնող հնչյուններով կազմել նոր բառեր, բայց այնպիսի բառեր, որոնք կարող են միանալ և կազմել նախադասություն, ապա կա՛մ որևէ պատմություն է հյուսվում դրա շուրջ, կա՛մ էլ այդ նախադասությունը դառնում է վերնագիր ինքնուրույն ստեղծագործության համար:

5. Խոսքի զարգացումն ըստ երաժշտության. Ուսուցիչը նախօրոք ընտրում է երեխաների տարիքին համապատասխան դասական երաժշտություն: Դասարանում նա ասում է, որ պիտի լսեն երաժշտություն և գրի առնեն դրա բովանդակությունը, գրատախտակին գրում է. «Ես տեսնում եմ...»: Ապա աշակերտներին առաջարկում է փակել աչքերը և լսել երաժշտության մի կտորը: Ապա երբ երաժշտությունն ավարտվում է, առաջարկում է բաց անել աչքերը և գրել, թե ինչ պատկերներ էին տեսնում մեղեդին լսելիս: Ժամանակը լրանալուց հետո մի քանի աշակերտ կարդում

են իրեց գրածները: Երկրորդ քայլին ուսուցիչը գրատախտակին գրում է. «Ես լսում եմ...», ապա նորից է առաջարկում փակել աչքերը, լսել նույն մեղեդին: Հետո մեղեդին ընդհատվելուց հետո երեխաները գրի են առնում ձայները, որ լսում էին իրենց ներսում: Նորից մի քանի աշակերտ կարդում են իրենց գրածները: Երրորդ քայլին ուսուցիչը գրատախտակին գրում է. «Ես զգում եմ...»: Աշակերտները դարձյալ փակում են աչքերը, նորից հնչում է մեղեդին: Ավարտից հետո երեխաները տետրերում գրում են, թե ինչ էին զգում, երբ լսում էին երաժշտությունը: Չորրորդ քայլին ուսուցիչն առաջարկում է միացնել երեք քայլով կատարած գրառումները և հորինել պատմություն, ապա վերնագրել շարադրանքը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015, 315 էջ:
2. Գրիգորյան Ա. Վ., Ստեղծագործական շարադրությունների ուսուցման հարցեր, «Լույս» հրատ., Երևան, 1984, 155 էջ:
3. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, «Լույս» հրատ., Եր., 1980, 563 էջ:
4. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, «Լիմուշ» հրատ., Եր., 2012, 295 էջ:

CREATIVE ESSAY AS A MEANS OF CONNECTED SPEECH DEVELOPMENT IN ELEMENTARY SCHOOL

ISKANDARYAN NAIRA

PhD in Philological Sciences, Associate Professor,

Lecturer of Gavar State University

e-mail: isnaira123456@gmail.com

AVETISYAN ANIK

2nd year master's student of the "Elementary Pedagogy and Methodology"

Department, Faculty of Humanities, GSU

e-mail: anikavetisyan417@gmail.com

In the current era of rapid development of information technology, the methodology of speech development has reached a new level. DIfferent theories and scientific directions that appeared in the last decade, which are closely related to the methodology of teaching the mother tongue, have had a significant impact on the modern methodology of speech development. *This article attempts to study and analyze the gaps that emerged during the teaching of creative essays in*

elementary groups and to propose ways to address them. The subject of the research is the methods of teaching creative essays in primary classes. *The research employed methods such as study, review, and question-and-answer analysis of the existing theoretical material on the topic.* As a result of the studies, it became clear that in the process of writing creative essays, there are a number of omissions that affect the development of students' connected speech, creative imagination, grammatical and syntactic abilities. We have presented methods in the form of recommendations for correcting the problems that have appeared, which will help to improve the process of teaching creative essays. Among them are "Brainstorming", "Sentence with three random words", speech development according to music, Gianni Rodari's works with words, methods of applying elements of multidisciplinary thinking technology and methodological skills.

Keywords: *essay, creative essay, descriptive essay, judgmental essay, essay on a picture, essay on a movie, making a plan.*

ТВОРЧЕСКОЕ СОЧИНЕНИЕ КАК СРЕДСТВО РАЗВИТИЯ СВЯЗНОЙ РЕЧИ В НАЧАЛЬНЫХ КЛАССАХ

ИСКАНДАРЯН НАИРА
Кандидат филологических наук, доцент
Преподаватель ГГУ
электронная почта: isnaira123456@gmail.com
АВЕТИСЯН АНИК
Студентка 2-ого курса магистратуры кафедры «Начальная педагогика и методология» факультета гуманитарных специальностей ГГУ
электронная почта: anikavetisyan417@gmail.com

В современную эпоху бурного развития информационных технологий методика развития речи вышла на новый уровень. Появившиеся в последнее десятилетие отдельные теории и научные направления, тесно связанные с методикой обучения родному языку, оказали значительное влияние на современную методику развития речи. В данной статье предпринята попытка изучить и проанализировать выявленные пробелы в обучении творческому письму в начальных классах, а также предложить новые подходы к их устранению. Предметом исследования является методика преподавания творческого сочинения в начальных классах. Для проведения исследования

были применены методы анализа теоретических материалов, наблюдения, а также метод вопросов и ответов. В ходе изучения выявлено, что процесс написания творческих текстов сопровождается рядом недочетов, влияющих на развитие связной речи учащихся, их творческого воображения, а также грамматических и синтаксических навыков.

. Мы представили методы в виде рекомендаций по исправлению появившихся проблем, способствующие улучшению процесса обучения творческому письму. Среди них: «Мозговой штурм», «Предложение с тремя случайными словами», развитие речи под музыку, работы Джанни Родари со словами, методы применения элементов технологии мультидисциплинарного мышления и методических навыков.

Ключевые слова: *сочинение, творческое сочинение, описательное, оценочное эссе, сочинение по картинке, сочинение по фильму, составление плана.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 15.01.2025թ.:
Հոդվածը գրախոսվել է 25.01.2025թ.:
Ընդունվել է տպագրության 25.04.2025թ.: